

# ԻՋԵՎԱՆ



# ԻՋԵՎԱՆ

«Ֆեստիվառ» երաժշտական փառատոնի տարբերանշանը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավից:

Սարյանական արտահայտիչ գույները փոխանցում են հայաստանյան վառ ամառային տրամադրությունը՝ «Ֆեստիվառ»-յան շունչը:

Այս ամառ ԿԳՄՍ նախարարությունը և Առաջին ալիքը հրավիրում են քեզ Իջևան՝ համտեսելու տեղական և վրացական արտադրանքը, այցելելու թաքնված և հայտնի անկյուններն ու վայելելու համերգային ծրագիրը:

## ԻՋԵՎԱՆ, ՕԳՈՍՏՈՍԻ 10
### ՇԱՏՐՎԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿ

**12:00 -** տեղական և վրացական արտադրանքի տոնավաճառ
Տավուշի մարզ, ք. Իջևան, Շատրվանների հրապարակին հարակից տարածքում

**15:00 -** համերգ Տավուշի մարզի արտիստների և խմբերի մասնակցությամբ
Տավուշի մարզ, ք. Իջևան, Շատրվանների հրապարակ

**19:30 -** հայ-վրացական համերգային ծրագիր.
Էրիկ Կարապետյան
Դաթո Խուջաձե
Նուցա Թոփուրիա

# Ո՞ՒՐ ԳՆԱԼ ԻՋԵՎԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՎԱՅՐԵՐՈՒՄ



**«Իջևան» պատմաերկրագիտական թանգարանը** բացվել է 1955 թ., գտնվում է քաղաքի հարավային մուտքի մոտ: Թանգարանում կան իրեր, որոնք պատկանում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներին, ուրարտական շրջանին: Այցելուներն այնտեղ կարող են տեսնել Մորգեի այբուբենով հեռախոսը, որով Սարգիս Կասյանը Լենինին հեռագրել է Հայաստանի սովետականացման մասին, 1918 թ. դազգահ, որն օգտագործել են Քարվանսարայի և Շամշադինի պարտիզանները, ռադիոընդունիչ, որը Ստալինը նվիրել է առաջինը Բեռլին մտած տանկիստին, և այլ ցուցանմուշներ:

*Հասցե՝ Տավուշի մարզ, Իջևան, Երևանյան 5*
*Օգոստոսի 10-ին բաց է 10:00-19:30*



**«Վերնատուն» պատկերասրահը** կազմավորվել է 1980-ականներին արվեստաբան Սարո Սարուխանյանի նախաձեռնությամբ: Պատկերասրահի 1-ին հարկում կազմակերպվել են գեղանկարչական ցուցահանդեսներ, իսկ 2-րդ հարկում՝ պատկերասրահի ֆոնդին հանձնված հայ նկարիչների գործերից կազմված մշտական ցուցադրություններ: Պատկերասրահում 200 նկար կա:

*Հասցե՝ Տավուշի մարզ, Իջևան, Անկախության 1/46*
*Օգոստոսի 10-ին բաց է 10:00-19:30*



**Մակարավանքը** գտնվում է Աչաջուրից 3 կմ հարավ-արևմուտք՝ Պայտաթափ լեռան լանջին: Գլխավոր եկեղեցին կառուցվել է 1205 թ.: Ըստ ավանդության՝ վանքը կառուցել են Մակար վարպետն ու նրա միակ որդին: Որդին քար էր տաշում, նախշում, իսկ հայրը՝ շարում: Վանքի պատերն աստիճանաբար բարձրանում էին, իսկ Մակարը գիշերում էր կիսավարտ պատերի վրա: Երբ հայրը նկատում է, որ քարերն իրար չեն բռնում, հասկանում է՝ որդին այլևս չկա, և վանքի կառուցումից հետո գագաթից նետվում է ցած: Վարպետին թաղում են եկեղեցու պատի տակ և վանքն էլ անվանում Մակարավանք:

*ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ*



**Լաստիվերը** գտնվում է Ենոքավանից 3 կմ հեռավորության վրա: Ըստ տարբեր վարկածների՝ քարանձավ հասնելու համար մարդիկ գերաններից աստիճան են կառուցել կամ պարանով կապված փայտե լաստի միջոցով են բարձրացել: Լաստիվերը երկհարկանի է՝ բաղկացած 12 սենյակից: Պատերին հարթաքանդակներ են, որոնցից առանձնանում է հարսանիքի տեսարան հիշեցնող հարթաքանդակը: Քարանձավն ի սկզբանե հեթանոսական պաշտամունքի վայր է եղել և բնակատեղի, իսկ ճգնավորների համար՝ աղոթատեղի, այդ պատճառով հիշատակվում է նաև Անապատ անունով:

*ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ*



**Սրվեղի վանքը** գտնվում է Այգեհովիտից մոտ 3 կմ հարավ-արևմուտք՝ Խաչի տակ կոչվող վայրում: Միջնադարյան Հայաստանի Կայան գավառի հոգևոր ու մշակութային կենտրոններից է: Ենթադրվում է, որ կառուցվել է XII-XIII դդ.: Հուշարձանախումբը բաղկացած է երկու եկեղեցիներից, միաբանների բնակելի և տնտեսական շինություններից: Շրջափակված է պարսպապատով: Պարսպից մնացել են միայն հիմնապատերը: Պարսպից դուրս՝ վանքի շրջակայքում, կան այլ շինությունների մնացորդներ, տապանաքարեր, խաչքարեր, ջրատար կավե խողովակներ:



**Մորո Ձորո վանքը** գտնվում է Լուսահովիտից հարավ-արևմուտք: Միջնադարյան  հուշարձանը հոգևոր և մշակութային կենտրոն է եղել: Մորո Ձորոյի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է V դ. կոպտատաշ բազալտ քարով: 1197 և 1213 թթ. իշխաններ Իվանե և Զաքարե Զաքարյանները նորոգել են վանքը, վերականգնել Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը և ծածկը: Եկեղեցու շուրջը տարածված են խաչարձաններ ու գերեզմանաքարեր:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Առաքելոց վանքը** գտնվում է Առաքելոց գյուղատեղիի կենտրոնում: Միջնադարյան վանական համալիրն այժմ կիսավեր վիճակում է: Բաղկացած է երկու եկեղեցուց, գավթից, զանգակատնից, բնակելի և օժանդակ շինություններից, շրջապատված է պարիսպներով: Կառուցվել է XIII դ. դեղնակապտավուն քարով: Վանքում պահպանվել են որմնանկարների մնացորդներ: Գլխավոր եկեղեցու մոտ կանգնեցված է Ս. Կարապետ խաչքարը, որի վրա կան արձանագրություններ: Ըստ վարկածի՝ երկրորդ եկեղեցին եղել է վանքի սեղանատունը, որի հարավային մուտքի վրա կա արձանագրություն՝ 1293 թ. թվագրությամբ:



**Դեղձուտի վանքը** գտնվում է Աճարկուտից 9 կմ հարավ-արևմուտք: Ճարտարապետական հորինվածքով, զարդաքանդակների և արտաքին հարդարանքի շնորհիվ համարվում է հայկական կարևորագույն մշակութային հուշարձաններից մեկը: Վանքը, իբրև հոգևոր ու մշակութային կենտրոն, իր ծաղկմանն է հասել հատկապես Սահկանաբերդի իշխան Սադունի օրոք: Հին ձեռագրերից հայտնի է, որ վանքը նաև գրչության օջախ էր Առաքել վարդապետի ժամանակ:



**Վարդան Մամիկոնյանի կաղնին** գտնվում է Ակնաղբյուրում: Ըստ ավանդույթի՝ ծառը տնկել է Վարդան Մամիկոնյանը 450 թ. Խաղխաղի ճակատամարտից վերադառնալիս: 1978 թ. կաղնին տապալվել է, և կողքին մարշալ Բաղրամյանը նոր կաղնի է տնկել: Պատմում են, թե դարեր շարունակ Ակնաղբյուր գյուղի ծերերը այս ծառի մոտից են իրենց որդիներին բանակ կամ պատերազմ ճանապարհել ու հետն էլ հորդորել. «Որդի, Զորավարի աղբրից ջուր խմիր, ձեռքդ Վարդանի ծառին քսիր, ու քեզ չարուչոռ չի դիպչի…»:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Սրանոցի կամուրջը** գտնվում է Քարահան գետի վրա: Նախկինում այս վայրում եղել է Կունեն անունը կրող բնակավայրը: Սրանոցի կամուրջն իրար է կապել Կունենի երկու թաղամասերը: Կամրջի աջակողմյան հատվածում մինչ օրս պահպանվել են բնակավայրի ավերակները: Ըստ վարկածի՝ կառուցվել է 12-13-րդ դդ.: Կամուրջը կառուցված է ճեղքված կրաքարից՝ շարված կրաշաղախով:



**Սարիգյուղի սոսին** միայնակ կանգնած 1100 տարեկան ծառ է, որի հրդեհման հետևանքով գոյացել է բավականին մեծ փչակ: Այցելուները հաճախ փչակում մոմեր են վառում: Ըստ լեգենդի՝ հազարամյա ծառը 7 տարին մեկ անգամ  առանց պատճառի այրվում է: Ծառի բնից դուրս են գալիս 13 ամուր ճյուղեր՝ դառնալով առանձին ծառեր, որոնք, մեկ այլ լեգենդի համաձայն, խորհրդանշում են Հիսուս Քրիստոսին և նրա աշակերտներին:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**«Մայր Հայաստան» հուշարձանը** կառուցվել է 1971 թ.: Այս հոյակերտ կոթողը դեռևս խորհրդային տարիներին համարվում էր Իջևան քաղաքի խորհրդանիշը: Հուշարձանը տեղադրված է քաղաքի հյուսիսային մուտքի մոտ՝ Իջևան-Թբիլիսի մայրուղու հարևանությամբ, բարձունքի վրա: Քանդակագործը Սերժ Մեհրաբյանն է:



**Հայրենական մեծ պատերազմին մասնակցած և հավերժացած հերոսների հիշատակին նվիրված հուշարձանը** գտնվում է Աղստև գետի աջափնյա բարձունքին: Հուշարձանի բացումը կատարվել է 1985 թ. մայիսի 9-ին: Հավերժական կրակը վառելու պատիվը տրվել է որդեկորույս մայրեր Արևհատ Օթարյանին և Հայկանուշ Մելիքսեթյանին: Հուշակոթողի ճարտարապետը Յուրի Բրեժնևն է: Իջևանի շրջանից Հայրենական մեծ պատերազմին զինվորագրվել էր 3725 մարտիկ:



**«Յելլ Էքստրիմ պարկը»** գտնվում է Ենոքավանի սարերում: Այն սկսել է գործել 2015 թ.՝ զիփ-լայնով առաջին թռիչքով: Տարիների ընթացքում զվարճանքների շրջանակն ընդլայնվել է: Այստեղ կարող են այցելել բոլորը, քանի որ հատուկ ֆիզիկական պատրաստվածության անհրաժեշտություն չկա: Պարկում կարելի է նաև թռչել պարապլանով, հեծանիվ վարել լեռներում, ձիավարել, զբաղվել զորբինգով, լեռնագնացությամբ, փեյնթբոլ խաղալ կամ միանալ Off-road տուրի: Այստեղ գործում է նաև Rope Park:



**Քանդակների այգին** գտնվում է Իջևանի կենտրոնական մասում: Այստեղ 1985-1992 թթ. կազմակերպվել են քանդակների միջազգային սիմպոզիումներ: Տարբեր երկրներից ժամանած քանդակագործներ տեղացի արվեստագետների հետ ստեղծել են արվեստի գործեր, որոնք տեղադրվել են քաղաքի տարբեր հատվածներում: Դրա շնորհիվ Իջևանը ստացել է «100 քանդակների քաղաք» անվանումը: Այստեղ է գտնվում նաև քաղաքի արհեստական ջրավազանը:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Իջևանի դենդրոպարկը** գտնվում է Աղստև գետի աջ ափին: Դենդրոպարկում կա 650 ծառ ու թուփ բոլոր մայրցամաքներից՝ բացառությամբ Ավստրալիայի: Իջևանի դենդրոպարկը 1962 թ. հիմնադրել է Լյուդվիգ Սայադյանը: Դենդրոպարկում է գտնվում աշխարհում միակ արջատխլենու արահետը, կան հսկա սեյբաներ, վայրի լիմոնենիներ, վայրի խնձորենի:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ



**Իջևանի գինու-կոնյակի գործարանը** Հայաստանի առաջին գինեգործարաններից է, հիմնադրվել է 1951 թ.: Գործարանի արտադրական բազմազանությունը ներառում է՝ բարձրորակ կոնյակներ, խաղողի և մրգային գինիներ, փրփրուն գինիներ, մրգօղիներ, հյութեր և պահածոների մեծ տեսականի: Գործարանում իրականացվում են նաև շրջայցեր, որոնք այցելուներին հնարավորություն են տալիս ծանոթանալու ոչ միայն հայկական գինեգործության, կոնյակագործության պատրաստման ընթացքին, այլև վայելելու տավուշյան հիասքանչ բնությունը:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ

# ՍՐՃԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐ ԻՋԵՎԱՆՈՒՄ

| | | |
|---|---|---|
| **«ԳԵՏԱՀՈՎԻՏ ՌԵԶՈՐԹ»**<br>Գետահովիտ, 6-րդ փ., շ. 88<br>+374 98 77 77 43 | **«ԼԱՍՏԻՎԵՐ ՌԵԶՈՐԹ»**<br>Ենոքավան, 2-րդ փ., շ. 9/1<br>+374 33 29 29 99 | **«ՆՅՈՒ ԿԱՍԿԱԴ»**<br>Իջևան, Ազատամարտիկների 33<br>+374 94 00 25 75 |
| **«ԱՊԱԳԱ ՌԵԶՈՐԹ»**<br>Ենոքավան, 1-ին փ., շ. 38<br>+374 60 65 06 51 | **«ԱԼԱՆԴ ՌԵԶՈՐԹ»**<br>Ենոքավան, 1-ին փ., շ. 30<br>+374 77 82 00 80 | **«ԿԵՆՈՒՏ ՌԵՍԹ ԶՈՆ»**<br>Դիլիջան-Իջևան մայրուղի,<br>Գանձաքար 46/1, M4<br>+374 98 61 00 00 |
| **«ԱՄԱՆ» ՌԵՍՏՈՐԱՆ**<br>Իջևան, Երևանյան 51/4<br>+374 41 05 00 09 | **«ԱՅԳԵՊԱՆԻ ՏՆԱԿ»**<br>գ. Աչաջուր<br>+374 94 11 65 70 | **«FISH ECO GARDEN»**<br>Դիլիջան-Իջևան մայրուղի, M4<br>+374 94 06 03 00 |
| **«ԿԱՐՊԵՏ» ՌԵՍՏՈՐԱՆ**<br>Իջևան, Երևանյան 141/1<br>+374 33 20 50 50 | **«ԲԱԼԿՈՆ» ՍՐՃԱՐԱՆ-ՌԵՍՏՈՐԱՆ**<br>Իջևան, Անկախության 1/45<br>+374 94 00 14 18 | **«ՄԵԼԻՔԱՆԻՍՏ»**<br>Ծաղկավան, 3-րդ. փ., շ. 38<br>+374 93 55 54 95 |
| **«ՔԱՐՎԱՆՍԱՐԱ ՌԵԶՈՐԹ»**<br>Իջևան, Արցախյան 114<br>+374 94 47 97 87 | **«ՆՈՎԵԼ» ԱՐՎԵՍՏԱՆՈՑ-ԹԵՅԱՐԱՆ**<br>Իջևան, Երևանյան 6/6<br>+374 98 30 45 00 | **«ԲԵՐԿՐԻ» ԳԱՍՏՐՈ ԲԱԿ ԵՎ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**<br>Ենոքավան, 1-ին փ., 1-ին նրբ., շ. 1<br>+374 98 44 10 60 |
| **«ԿԵՆԱՑ ՀԱՑ»**<br>**ԱՄԲՈՂՋԱՀԱՏԻԿԻ ԱԿԱԴԵՄԻԱ**<br>Իջևան, Վասիլյան 43<br>+374 91 00 02 24 | **«TUMANYAN'S HOUSE»**<br>Իջևան, Իջևանյան 6<br>+374 94 55 00 98 | **«ԵՐԿՆԱՔԱՐ»**<br>Սարիգյուղ, 2-րդ փ., շ. 41<br>+374 93 80 09 10 |
| **«ՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ»**<br>Աչաջուր, 1-ին փ., M4<br>+374 93 40 52 42<br>+374 94 40 52 42 | **«FAMILY»**<br>Իջևան, Երևանյան 65<br>+374 98 97 01 70 | **«ԳԱՍՏՐՈ ԲԱԿ»**<br>Աչաջուր, 1-ին փ., 3-րդ<br>փակուղի, 3-րդ տուն<br>+374 94 14 13 79 |
| **«ԻՋԵՎԱՆԱՏՈՒՆ»**<br>Իջևան, Երևանյան 222<br>+374 94 00 40 05 | **«X-DRIVE ANTICAFE»**<br>Իջևան, Վալյանսի 1<br>+374 33 57 22 22 | **«ԿԱՆԱՉ ՏՈՒՆ»**<br>Ենոքավան, 1-ին փ., տարածք 31<br>+374 99 85 58 45 |
| **«ՌՈՒԶԱՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**<br>Իջևան, Երևանյան 5/7<br>+374 94 39 90 24 | **«YELLOW DREAM»**<br>Իջևան, Մելիքբեկյան 5/1<br>+374 77 38 48 38 | **«ՖԻԼԻՆ ՌԵԶՈՐԹ»**<br>Իջևան, Երևանյան 217/5<br>+374 93 07 06 06 |
| **«ՄԵՆՈՒԱ ՌԵԶՈՐԹ»**<br>գ. Գանձաքար 1/6<br>+374 94 25 30 25 | **«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ»**<br>Իջևան, Երևանյան 5<br>+374 33 18 82 99 | **«ՌԱԲԱՍԱ ՖՈՒԴ ԿՈՐՏ»**<br>Իջևան, Արցախյան 51<br>+374 98 10 32 00 |

# ԿԵՑԱՎԱՅՐԵՐ ԻՋԵՎԱՆՈՒՄ

**«ԳԵՏԱՀՈՎԻՏ ՌԵԶՈՐԹ»**
Գետահովիտ, 6-րդ փ., շ. 88
+374 98 51 51 99

**«OLD IJEVAN» ԲՈՒՏԻԿ ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան, Երևանյան 51/4
+374 95 07 00 09

**«ՖԻԼԻՆ ՌԵԶՈՐԹ»**
Իջևան, Երևանյան 217/5
+374 93 07 06 06

**«ԴԱՆ ՌԵԶՈՐԹ»**
Իջևան, Երևանյան 7/3
+374 91 22 22 96

**«ԲԵԼ ՎԻԼ ՀՈԹԵԼ»**
Իջևան, Երևանյան 6/6
+374 99 16 28 66

**«ԿԱՄԱՐ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան, Նալբանդյան 11/12
+374 93 00 24 00

**«ԱՊԱԳԱ ՌԵԶՈՐԹ»**
Ենոքավան, 1-ին փ., շ. 38
+374 60 65 06 55

**«ԼԱՍՏԻՎԵՐ ՌԵԶՈՐԹ»**
Ենոքավան, 2-րդ փ., շ. 9/1
+374 33 29 29 99

**«HEAVEN» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Իջևան, Երևանյան 8/10
+374 94 00 55 94

**«ԱԼԱՆԴ ՌԵԶՈՐԹ»**
Ենոքավան, 1-ին փ., շ. 30
+374 77 82 00 80

**«TUMANYAN'S HOUSE»**
Իջևան, Իջևանյան 6
+374 94 55 00 98

**«ԲԵՐԿՐԻ» ԳԱՍՏՐՈ ԲԱԿ ԵՎ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Ենոքավան, 1-ին փ., 1-ին նրբ., շ. 1
+374 98 44 10 60

**«ՌՈՒԶԱՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան, Երևանյան 5/7
+374 94 39 90 24

**«ՕՋԱԽ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան Երևանյան 217/1
+374 77 40 74 01

**«ՄԵՆՈՒԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
գ. Գանձաքար 1/6
+374 94 25 30 25

**«ԿԱՆԹԵՂ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Գետահովիտ, փ. 16-րդ 44/1
+374 93 43 26 32

**«ՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ»**
Աչաջուր, 1-ին փ., M4
+374 93 40 52 42
+374 94 40 52 42

**«ՄՈՃ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան, Երևանյան 3
+374 98 05 02 55

**«ՄՄ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան, Վասիլյան 7
+374 98 08 99 90

**«ՔԱՐՎԱՆՍԱՐԱ ՌԵԶՈՐԹ»**
Իջևան, Արցախյան 114
+374 94 47 97 87

**«ԵՆՈՔԱՎԱՆ ՌԵԶՈՐԹ»**
գ. Ենոքավան
+374 93 42 33 94

**«ԷԿՈ ՕԼԴ ԻՋԵՎԱՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Իջևան, Երևանյան 11
+374 93 07 01 08

**«ԱՆԱՀԻՏ ԲԻ ԷՆԴ ԲԻ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Իջևան, Թավրիզյան 4
+374 77 07 22 74

**«YENOKAVAN GLAMPING»**
Ենոքավան, 1-ին փ., 2/5
+374 99 04 55 77

**«ԼԻԴԵՐ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Իջևան, Մետաղագործների 22
+374 93 90 05 02

**«ԿԱՆԱՉ ՏՈՒՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Ենոքավան, փ. 1/31
+374 99 85 58 45

**«OHANYAN GARDEN HALL»**
Ենոքավան, 1-ին փ., 1-ին փակուղի, 7-րդ հողամաս
+374 93 69 37 12

**«ELEGAYA» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Իջևան, Նար-Դոս 49
+374 98 44 34 13

**«ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Իջևան, Ասլանյան 130
+374 94 07 17 57

**«IJEVAN'S GARDEN» ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**
Գետահովիտ, 3-րդ փ., 1
+374 98 00 55 53
+374 94 23 50 93

**«ՍԿԱԶԿԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑ**
Իջևան, Նալբանդյան 1
+374 91 48 07 78

**ՕԳՈՍՏՈՍԻ 24-ԻՆ** փեստիվալային
ռիթմերը կհասնեն Եղեգնաձոր, որտեղ տեղի կունենա
«Եվրատեսիլ 2024»-ի Հայաստանի պատվիրակ
**«Լադանիվա»** խմբի համերգը:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ

GEORGIAN PUBLIC BROADCASTER

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ